# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
# ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

**N 25- Ա** **04 մարտի 2016 թ.**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ՄՐՑԱՆԱԿԻ ՀԱՄԱՐ <<ԼԱՎԱԳՈՒՅՆ ՄԱՐԶԱԿԱՆ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿ>> ՄՐՑՈՒՅԹԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի,<<Մանկապատանեկան սպորտի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի թիվ Ն< 728 հրամանագր 1.6–րդ և 1.19-րդ կետերի պահանջներով ու հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի 2016 թվականի փետրվարի 22-ի <<Հայաստանի Հանրապետության Նախագահի մրցանակի համար <<Լավագույն մարզական նախադպրոցական հիմնարկ>> մրցույթի կանոնակարգը հաստատելու մասին>> N33-Ա/1 հրամանը

**կարգադրում եմ՝**

1.Հաստատել.

1) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզում Հայաստանի Հանրապետության Նախագահի մրցանակի համար «Լավագույն մարզական նախադպրոցական հիմնարկ» մրցույթի տարածքային և մարզային փուլերի կազմակերպման և անցկացման կազմկոմիտեի կազմը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզում Հայաստանի Հանրապետության Նախագահի մրցանակի համար «Լավագույն մարզական նախադպրոցական հիմնարկ» մրցույթի մարզային փուլի անցկացման մրցավարական հանձնաժողովի կազմը՝ համաձայն N 2 հավելվածի.

3) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզում Հայաստանի Հանրապետության Նախագահի մրցանակի համար «Լավագույն մարզական նախադպրոցական հիմնարկ» մրցույթի տարածքային և մարզային փուլերի անցկացման ժամանակացույցը՝ համաձայն N 3 հավելվածի:

2. Կազմկոմիտեի նախագահին՝

1) կազմակերպել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզում Հայաստանի Հանրապետության Նախագահի մրցանակի համար «Լավագույն մարզական նախադպրոցական հիմնարկ» մրցույթի մարզային փուլի մրցումների բացման և փակման հանդիսավոր արարողություն.

2) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզում Հայաստանի Հանրապետության Նախագահի մրցանակի համար «Լավագույն մարզական նախադպրոցական հիմնարկ» մրցույթի մարզային փուլի մրցումների ավարտից հետո ներկայացնել հաշվետվություն:

3. Մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ Անուշ Պողոսյանին՝ Հայաստանի Հանրապետության Նախագահի մրցանակի համար «Լավագույն մարզական նախադպրոցական հիմնարկ» մրցույթի տարածքային և մարզային փուլերի մրցումների անցկացման օրերին համապատասխան հաստատություններում ապահովել բժշկի ներկայությունը:
4. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի քարտուղարության պետ Վերգինե Ղուկասյանին՝ միջոցառումների անցկացման գործընթացն իրականացնելու համար ապահովել սույն կարգադրության և միջոցառման կանոնակարգի առաքումը մարզի համայնքներ:
5. Սույն կարգադրության կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի տեղակալ Անդրանիկ Հակոբյանին :
6. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՌԱՖԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հավելված N1
ՀՀ Գեղարքունիքի մարզպետի
2016 թվականի մարտի 4 - ի
N 25-Ա կարգադրության

# ԿԱԶՄ
# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ՄՐՑԱՆԱԿԻ ՀԱՄԱՐ «ԼԱՎԱԳՈՒՅՆ ՄԱՐԶԱԿԱՆ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿ» ՄՐՑՈՒՅԹԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԵՎ ՄԱՐԶԱՅԻՆ ՓՈՒԼԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱԶՄԿՈՄԻՏԵԻ

Բաղալյան Գարիկ - մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ /նախագահ /

Ասատրյան Իվան. - մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ

Պողոսյան Անուշ - մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ

Զարվադարյան Գեղամ - մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության մշակույթի և սպորտի բաժնի վարիչ

Սաֆարյան Համբարձում - մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի վարիչ

Օհանյան Տիգրան - մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի գլխավոր մասնագետ

Շառոյան Վարազդատ - մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնիգլխավոր մասնագետ

Թիզյան Հակոբ - մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի գլխավոր մասնագետ

Գևորգյան Գևորգ - մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի կրտսեր մասնագետ

Մալխասյան Գոհար - մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի կրտսեր մասնագետ

Բիձյան Մարինե - մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի կրտսեր մասնագետ

Գալստյան Լյովա – Մարտունու Ս.Դարբիյանի անվան N2 հիմնական դպրոցի տնօրեն

Մանուկյան Կարինե – Գավառի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղար /համաձայնությամբ/

Հովհաննիսյան Անահիտ – Սևանի քաղաքապետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի բաժնի վարիչ / համաձայնությամբ /

Կարապետյան Արամ - Մարտունու քաղաքապետի տեղակալ /համաձայնությամբ/

Ղալեչյան Հակոբ - Ճամբարակի քաղաքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ / համաձայնությամբ /

Բարսեղյան Սուսաննա - Վարդենիսի քաղաքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ /համաձայնությամբ /

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԵՎԱԿ ԽԼՂԱԹՅԱՆ

Հավելված N2

ՀՀ Գեղարքունիքի մարզպետի
2016 թվականի մարտի 4 - ի
N 25-Ա կարգադրության

**Կազմ**
**Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզում Հայաստանի Հանրապետության Նախագահի մրցանակի համար «Լավագույն մարզական նախադպրոցական հիմնարկ» մրցույթի մարզային փուլի անցկացման մրցավարական հանձնաժողովի**

Չարվադարյան Գ. - մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության մշակույթի և սպորտի բաժնի վարիչ /պատասխանատու/

Առաքելյան Ա. – մարզպետարանի աշխատակազմի կրթության , մշակույթի և սպորտի վարչության մշակույթի և սպորտի բաժնի առաջատար մասնագետ /գլխավոր մրցավար /

Բիձյան Մ. –մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի կրտսեր մասնագետ

Սարգսյան Ս. – Գավառ քաղաքի Պ. Ղանդիլյանի անվան N2 միջնակարգ դպրոցի ֆիզկուլտուրայի ուսուցիչ /համաձայնությամբ /

Ներսիսյան Լ. – ՀՀ դպրոցականների հանրապետական մարզական ֆեդերացիայի Գավառի տարածքային մասնաճյուղի նախագահ /համաձայնությամբ/

Սիմոնյան Ա. - Վարդենիս քաղաքի թիվ N1 մարզադպրոցի տնօրեն /համաձայնությամբ /

Հարությունյան Հ. – Մարտունու քաղաքային մարզադպրոցի փոխտնօրեն /համաձայնությամբ /

Բաղդասարյան Վ. - Մարտունու Ս. Դարբինյանի անվան N2 հիմնական դպրոցի ֆիզկուլտուրայի ուսուցիչ /համաձայնությամբ /

Դավթյան Վ. - Մարտունու Ս. Դարբինյանի անվան N2 հիմնական դպրոցի ֆիզկուլտուրայի ուսուցիչ /համաձայնությամբ /

Աշխատակազմի ղեկավար ՍԵՎԱԿ ԽԼՂԱԹՅԱՆ

Հավելված 3
ՀՀ Գեղարքունիքի մարզպետի
2016 թվականի մարտի 4 -ի
N 25-Ա կարգադրության

**Ժամանակացույց**
**Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզում Հայաստանի Հանրապետության Նախագահի մրցանակի համար «Լավագույն մարզական նախադպրոցական հիմնարկ» մրցույթի տարածքային և մարզային փուլերի անցկացման**

| Հ/Հ | Տարածքի անվանումը | Տարածքային փուլի անցկացման վայրը և ժամկետը | Մարզային փուլի անցկացման վայրը և ժամկետը |
|---|---|---|---|
| 1 | ք.Գավառ | 2016 թվականի մայիսի 16-17-ին, Գավառ քաղաքի Պ. Ղանդիլյանի անվան N2 միջնակարգ դպրոցում, ժամը 12:00-ին | **2016 թվականի հունիսի 3-ին**<br><br>**Մարտունու Ս. Դարբինյանի անվան N2 հիմնական դպրոցում, ժամը 12:00-ին** |
| 2 | ք.Ճամբարակ | 2016 թվականի մայիսի 17 -ին, Ճամբարակի ավագ դպրոցում ժամը 12:00-ին | |
| 3 | ք. Սևան | 2016 թվականի մայիսի 18--ին, Սևանի քաղաքապետարանի Ն.Դագարյանի անվան մարզադպրոցում, ժամը 12:00-ին | |
| 4 | ք.Վարդենիս | 2016 թվականի մայիսի 19-ին, Վարդենիսի Էդ.Պողոսյանի անվան N2 հիմնական դպրոցում, ժամը 12:00-ին | |
| 5 | ք. Մարտունի | 2016 թվականի մայիսի 20--ին Մարտունու Ս. Դարբինյանի անվան N2 հիմնական դպրոցում ժամը 12:00-ին | |

Աշխատանքային խմբի ղեկավար ՍԵՎԱԿ ԽԼՂԱԹՅԱՆ